Սիմէոն... անարժան երէց։ Գիրս մեայ և ձեռս հող դառնայ։ [Ցիշատակարան Ազգաբանութեան Մ. Գրոց]։

1566.

Թվին ՌԺԵ. ես Միքայէլ երեց՝ որ ազգանուն Թիխնո կոչիւր, որդի Կոստայի որդոյ Թիխնոյի, յուլիսի 20, ելաք ի Լովէն՝ Սիմուն երիցու հետ, ու գնացաք ի Լուպլին, ի մեծ տիվան, առ Զիկմունտ Աւկուստոս թագաւորն ի... սէմ. ու զիլովայ եկեղեցուն զքահանայսն ազատեցաք ի հարկապահանջութենէ քաղաքին և ի թագաւորականէ. ու թարխանութիւն [1] երեսս։ Աստուած զինքն ազատէ յամենայն չարէ։ [Ժողովածոյ գիրք]։

1568.

Արդ, ով մանկունք նոր Սիոնի, Ծընան զաւակ ողորմելի.
Որք հանդիպիք այսըմ տառի, Թողութեան զմեզ արժանի
Ցիշման առնէք զիս արժանի Հայցեմ լինել յօրըն վերջի։
Ըզմեղապարտս յամենայնի՝ Տէր՝ համօրէն ողորմեսցի՝
Զմինաս անուն՝ մեղաց գերի, Լինել բարեացն այն արժանի.
Տըրուպ ծառայ ամենայնի. Որ է առատ մարդկան ազգի,
Այլ և ծնողաց իմոց բարի Միշտ ողորմած ամենայնի.
Յովհան անուն և Ղանիմաթի. Որ խնդրողդ էք մեզ բարի.
Որ զառածեալս մեղաք գերի Ամէն, ամէն, և եղիցի։

Գրեցաւ ի յաշխարհս Իլախաց, ի քաղաքս Լով. Թվին Հայոց ՌԺԶ, յուլիս Ա. աւարտեցաւ. [Մաշտոց առ Մխիթ. վիեն]։

1572.

Գրեցաւ Զեռնմաշթոցս ի յաշխարհս Իլախաց, ի քաղաքս Լով, Թվ. ՌԻԱ, հոկտեմբեր ամսոյն աւարտեցաւ. ըստացօղն և ընթերցօղքն միաբանեալք ընդ գրչին՝ յիշեսցին ի Քրիստոս Յիսուս ի Տէր իւրեանց. ամէն։ — Զհամթեցի Յակոբ երէց յիշեցէք յաղօթս ձեր. զայս տաղս (Ո՛վ զարմանալի) գրեցի։ — [Մաշտոց, ի Բարիզ]։

1578.

Ի թագաւորութեանն Ստեփաննոս Պաթոռիչ բարեպաշտ արքային, որ էր յազգաւ Ըկռուզ, և հանդիպեցաւ յայսմ ամի ի քաղաքս Իլով, ի հայրապետութեան Տեառն Տէր Թադէոս կաթողիկոսին, կրկին ստացաւ զսուրբ աւետարանս Սէչովցի Պր. Տաւնաւադն աստուածասէր տանուտէրն, և ետ զսա սուրբ եկեղեցւոյ անուան Ս. Աստուածածնին Ղնիման. յիշատակ իւր հոգւոյն և իւր

1 Պարսիկ բառ, նշանակէ ազատ լլալ (հարկ տալէ)։